ԿԱՐԾԻՔ

Հայկանուշ Գուրգենի Այվազյանի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսական աճը աղքատության կրճատման, բնակչության բարեկեցության մակարդակի և կյանքի որակի բարելավման, արտադրության ծավալների և ապրանքաշրջանառության ընդլայնման, ենթակառուցվածքների զարգացման ամենահզոր գործիքներից է: Միջազգային տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական աճը և վերջինիս վրա ազդող գործոնները բազմիցս եղել են վերլուծության առարկա: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են օտարերկրյա ուղղակի ներդրումները (այսուհետ՝ ՕՈՒՆ) և վերջիններիս ունեցած պատճառահետևանքային ազդեցությունները տնտեսական աճի վրա: Քանի որ ՕՈՒՆ-երը նպաստում են նոր արտադրական գործունեությունների ձևավորմանը, գործող տնտեսությունների զարգացմանը, նորագույն տեխնիկայի, տեխնոլոգիայի կիրառմանը և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, կառավարման և կազմակերպական հմտությունների ձևավորմանը և կիրառմանը, ուստի վերջիններս չէին կարող անմասն մնալ տնտեսական աճի ձևավորման գործընթացում:

Ելնելով ՕՈՒՆ-երի ունեցած բազմաթիվ դրական ազդեցություններից՝ մի շարք տնտեսագետներ մշակել են վերջիններիս ունեցած ազդեցությունների տեսություններ և մեխանիզմներ: Հետազոտողների մեծ խումբ հատկապես վերջին երկու տասնամյակներում ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականորեն հետազոտել են ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Նշված վերլուծությունները կատարվել են ինչպես առանձին երկրների օրինակով, այնպես էլ ըստ տարածաշրջանների, տնտեսական միությունների և միջազգային կազմակերպությունների անդամ երկրների:

ՀՀ տնտեսությունը միջազգային տնտեսության մի մասնիկն է և ևս անմասն չէ միջազգային տնտեսական քաղաքականություններից և գործունեություններից: ՀՀ-ում այսօր նույնպես տարվում է ներդրումների ներգրավմանն ուղղված քաղաքականություն, մշակվում են ներդրումային ծրագրեր, սահմանվում են մեխանիզմներ, որոնց արդյունքում պետք է մեծանա երկրի ներդրումային գրավչության մակարդակը՝ նպաստելով դեպի երկիր օտարերկրյա ներդրումների հոսքերի ավելացմանը:

Վերոնշյալ հանգամանքները ամբողջապես ներկայացնում են դիտարկվող թեմայի արդիականությունն ու անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Ատենախոսական հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև փոխկապվածությունը և ստացված արդյունքների հիման վրա ներկայացնել ՀՀ օրինակով ճշգրիտ լուծումներ: Նշված նպատակի իրականացումը և լուծումը ենթադրում է որոշակի խնդիրների առաջադրում, դրանք են՝

- ✓ Ուսումնասիրելով ներդրումների և տնտեսական աճի տեսամեթոդական հիմքերը՝ ներկայացնել տնտեսական աճի էությունը, գործոնները և շարժիչ ուժերը, ներդրումների խրախուսման ձևերը և համակարգերը,
- ✓ Ներկայացնել ՕՈՒՆ-երի՝ տնտեսական աճի վրա ունեցած հնարավոր ազդեցության տեսամեթոդական ձևերը և մեխանիզմները,
- ✓ Պանելային վերլուծության շնորհիվ թվային տեսքով վերլուծել և ներկայացնել ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա երկրների օրինակով,
- ✓ Ներդրումների ներգրավման տեսանկյունից ուսումնասիրել ՀՀ մրցակցային առավելությունները և խոչնդոտ գործոնները: Վերջիններիս հիման վրա մշակել երկրի ներդրումային գրավչության բարելավման մեթոդներ և մեխանիզմներ,
- ✓ Հետազոտել ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների վերլուծական բնութագիրը ըստ տարիների, ոլորտների և երկրների,
- ✓ Ժամանակային շարքերի վերլուծության շնորհիվ բացահայտել ՀՀ-ում ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի փոխկապվածությունը և ներկայացնել ՀՀ տնտեսական աճի ապահովումը ներդրումային գրավչության բարձրացման ճանապարհով:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը և խնդիրները, ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական հիմքերը և տվյալների հավաքագրման աղբյուրները, ատենախոսության գիտական նորույթը, գործնական նշանակությունը և արդյունքների իրացումը, կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումների և տնտեսական աճի խթանման տեսամեթոդական հիմքերը» գլխում նպատակ ունենալով դիտարկել տնտեսական աճի ձևավորման հիմքերը և առաջացման դրդապատճառները, ներկայացվել են տնտեսական աճի էությունը և տեսակները, տնտեսական աճի գործոնները և շարժիչ ուժերը: Առաջին գլխի շրջանակներում

ուսումնասիրվել են նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների էությունը, խրախուսման ձևերը և մեթոդները: Նախքան ՕՈՒՆ-երի խրախուսման և ներգրավման քաղաքականությունների իրականացման մեխանիզմներ մշակելը, անհրաժեշտ է հասկանալ ՕՈՒՆ-երի հիմնական բնութագիրը, որտեղ և ինչու են կատարվում ՕՈՒՆ-երը, որպեսզի վերջիններիս հիման վրա մշակվեն ճշգրիտ մեխանիզմներ: Նշված ենթագլխում անդրադարձ է կատարվել այդ բոլոր հարցերին:

Ատենախոսության երկրորդ՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումները որպես տնտեսական աճի ապահովման կարևոր բաղկացուցիչ» գլխի շրջանակներում ՕՈՒՆ-երը ուսումնասիրվել են որպես տնտեսական աճ ապահովող առանցքային գործոն:

Նպատակ ունենալով դիտարկել «ՕՈՒՆ-տնտեսական աճ» փոխկապվածությունը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականորեն, իրականացվել է էմպիրիկ միջճյուղային հետազոտություն՝ 87 զարգացող և զարգացած երկրների համար:

Աշխատանքում մոդելի տեսակը որոշելուց հետո իրականացվել են մոդելի որակը և ճշգրտությունը ստուգելու հետազոտություններ՝ ստուգելով գծային կախվածությունը, հետերոսկեդաստիկությունը և սերիական կորրելացիան: Ամփոփող արդյունքների հիման վրա մոդելի արդյունքները ներկայացվել են աղյուսակների և հաշվարկների տեսքով:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսական աճի ապահովումը ներդրումային գրավչության բարձրացման ճանապարհով» գլխի շրջանակներում դիտարկվել են ներդրումների ներգրավման հարցում Հայաստանի մրցակցային առավելությունները և խոչընդոտող գործոնները: Ուսումնասիրվել են նաև ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան և հիմնական միտումները:

Պարզելու համար, թե ՀՀ օրինակով ՕՈՒՆ-երը ինչպիսի ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա և ինչպիսին կարող է լինել վերջիններիս հետագա ազդեցությունը, 2001թ. առաջին եռամսյակից մինչև 2017թ. առաջին եռամսյակ ընկած ժամանակահատվածի կտրվածքով իրականացվել է նաև ժամանակային շարքերի էկոնոմետրիկ վերլուծություն:

Նախքան բուն վերլուծությունը, բոլոր ցուցանիշները ճշգրտվել են, այսինքն՝ բոլոր ցուցանիշները բերվել են չափման միևնույն միավորի (մլն. դրամ), ընդ որում բոլոր ցուցանիշները ներկայացված են հաստատուն արժեքով, հաշվարկվել են որպես նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի նկատմամբ փոփոխություն՝ տոկոսային արտահայտությամբ:

Ի սկզբանե ստուգվել է տվյալների ստացիոնարությունը, այնուհետև կոինտեգրության առկայությունը: Այս ամենից հետո տարբեր թեստերի միջոցով ստուգվել է մոդելի ճշգրտելիությունը և վերջիններիս հիման կայացվել են եզրահանգումներ:

Աշխատանքի **եզրակացություններ** մասում ներկայացված են հետազոտության հիմնական եզրակացությունները և բարձրացված հիմնախնդիրների լուծման

մոտեցումները, որոնք բխում են ատենախոսության տրամաբանությունից և արված վերլուծություններից:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Հետազոտության առարկայի, օբյեկտի և նպատակի ձևակերպումները իմաստային առումով միմյանցից գրեթե չեն տարբերվում:
2. Աշխատանքի 3-րդ նորույթն իր ձևակերպմամբ հիշեցնում է բոլորիս հայտնի մուլտիպլիկատորի էֆֆեկտը: Մի կողմ թողնելով, որ նշյալ էֆֆեկտի մասով առհասարակ բացակայում է որևէ հաշվարկ կամ էմպիրիկ դիտարկում՝ նշենք, որ 3-րդ կետով ձևակերպվածը որպես նորույթ քննարկելի է:
3. Աշխատանքում տեղ են գտել իրար հակասող թեզեր: Այսպես, օրինակ աշխատանքի մի մասում տնտեսական աճի և ՕՌԻՆ-երի կապը հեղինակը ներկայացնում է դրական, իսկ մյուս մասում՝ բացասական (տես գծապատկեր 22.):
4. Աշխատանքում նկատվում է մտահանգումների տրամաբանության խնդիր: Օրինակ եզրակացությունների 2-րդ ենթակետում, հեղինակը փաստում է, որ ՕՌԻՆ-երի և տնտեսական աճի կապը կայուն դրական է, սակայն անհասկանալի է, թե ինչպես է հեղինակը եզրահանգում, թե դրանից կնվազի ներդրումային ռիսկը, կամ թե ինչու են ՀՀ ՕՌԻՆ-երը տարեցտարի նվազել:
5. Աշխատանքում տեսանելի չեն նաև ներդրումների ոլորտում բարեփոխումների գծով բավարար հեղինակային առաջարկություններ: Կան մի շարք եզրահանգումներ, որոնք, սակայն, վաղուց հայտնի թեզեր են (մասնավորապես, եզրակացությունների 1-ին ենթակետը):
6. Էկոնոմետրիկ մեթոդի կիրառության մասով.
   - Ընդհանուր առմամբ աշխատանքում չափից ավելի են օգտագործված և շեշտադրված տնտեսաչափական գործիքները: Կարծես, դրանց կիրառումը դարձնել են ինքնանպատակ և աշխատանքից դուրս են թողնել թեմայի համար շատ ավելի առաջնային հիմնահարցեր:
     Հատկապես մոդելից բացակայում են մոլտիպլիկատորի հաշվարկը, այնպիսի որակական գործոններ, ինչպիսին են քաղաքական շրջափակման և ինստիտուցիոնալ հենքերը (contract enforcement) և այլն: Առանց որոնց ներդրումների ցանկացած մոդել առարկելի է ի սկզբանե:
   - Աշխատանքի մոդելում ներկայացվում է, որ տնտեսական աճը կախված ՕՌԻՆ-երից, և, որ ՕՌԻՆ-երն էլ կախված տնտեսական աճից: Ուստիև, ստացված մոդելի այս շրջապտույտը չի ներկայացնում գիտական ցանկալի որոշակիությունը: Իսկ, միգուցե, այդ երկու գործոնների կոռելացիան պայմանավորված է մեկ այլ՝ 3-րդ գործոնով: Հարց, որը բաց է մնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հավշի առնելով աշխատանքի տնտեսաչափական և մեթոդական հենքը՝ կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունը իրենից ներկայացնում է ուշագրավ հետազոտական աշխատանք, ինչի մասին վկայում են ուսումնասիրության արդյունքները: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, ինչպես և ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, ընդհանուր առմամբ գիտականորեն հիմնավորված և ընդունելի են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, **Հայկանուշ Գուրգենի Այվազյանի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տ.գ.թ., Հայ-Ռուսական համալսարանի Տնտեսագիտության
և բիզնեսի ինստիտուտի ավագ դասախոս — Հ. Զ. Հարությունյան

« 08 » փետրվարի 2021թ.

Հ.Զ. Հարությունյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ.՝ — Ռ.Ա. Գասաբաբովա